



«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան»
հիմնադրամի տնտեսող Գ. Գյուրջինյան

«12» փետրվարի 2025թ

**ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

Անի Արթուրի Թամազյանի «Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերի խոսույթային և լեզվագործաբանական առանձնահատկությունները» վերնագրով ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսությունը նվիրված է դիվանագիտական խոսույթի լեզվագործաբանական առանձնահատկությունների ուսումնասիրությանը՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերի նյութի հիման վրա:

Ժամանակակից լեզվաբանական հետազոտություններում մեծ տեղ է գրավում բազմազան ոլորտների խոսույթների վերլուծությունը տարբեր հայեցակետեր: Հատկապես կարևորվում է գործաբանական հայեցակետը, քանի որ այս կամ այն խոսույթի լեզվական կաղապարման միջոցով են մեր գիտակցության մեջ ձևավորվում տվյալ ոլորտի մասին մեր պատկերացումներն ու վերաբերմունքը: Այս համատեքստում Անի Թամազյանի ատենախոսության թեման արդիական է և գիտական արժեք է ներկայացնում:

Ատենախոսության ներածական մասում Ա.Թամազյանը առաջադրում է երկու վարկած՝ 1. ոչ պատշաճ լեզվագործաբանական ձևակերպումների և կաղապարների կիրառումը նպաստել է Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ ճանապարհով լուծման ձախողմանը, և 2. ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերում գերակշռում է պարտվողական խոսույթը, որը չունի պարտավորեցնող բնույթ, մինչդեռ Կոստովոյի դեպքում դիվանագիտական փաստաթղթերում վճռական խոսույթը նպաստել է հակամարտության արդյունավետ հանգուցալուծմանը:

Ելնելով վերոնշյալ վարկածներից և առաջադրված խնդիրներից՝ ատենախոսը կառուցել է հետազոտությունը, որը ներկայացված է ատենախոսության երեք գլուխներում:

Ներածության մեջ հստակ ներկայացված է հետազոտության արդիականությունը, սահմանված է նպատակը և խնդիրները, նորույթը, տեսական և գործնական արժեքը, պաշտպանության առաջադրված դրույթներն ու ատենախոսության կառուցվածքը: Կարծում ենք վերաձևակերպման կարիք ունի միայն հետևյալ հատվածը՝ “Thus, we see a need to study the language of the OSCE Minsk Group documents in order to understand its relation to conflict resolution and **to identify the evidence of discourse and pragmalinguistics that produced various results** ... (էջ 5)” (թարգմանաբար՝ Այսպիսով, մենք անհրաժեշտություն ենք տեսնում ուսումնասիրելու ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերի լեզուն՝ հասկանալու դրա կապը հակամարտությունների կարգավորման հետ և բացահայտելու **խոսույթի և լեզվագործաբանության վկայությունները/ ապացույցներ**, որոնք հանգեցրել են տարբեր արդյունքների): Կարծում ենք ճիշտ կլիներ հետևյալ ձևակերպումը՝ “**to identify discourse features and pragmalinguistic strategies that have influenced various outcomes**”.

Ատենախոսության առաջին գլխում, որը վերնագրված է «Դիվանագիտական խոսույթի վերլուծության տեսական մոտեցումները» Ա. Թամազյանը մանրամասն ներկայացրել է դիվանագիտական խոսույթի առանձնահատկությունները՝ համեմատականներ անցկացնելով քաղաքական խոսույթի հետ՝ տարբեր տեսաբանների մեկնաբանությամբ: Ատենախոսը քննարկել է տվյալ խնդրի շուրջ առկա տեսական գրականությունը երեք ենթագլուխներում: Հարկ է նշել, որ Ա.Թամազյանը լավատեղյակ է ուսումնասիրության թեմային վերաբերող տեսական գրականությանը և մանրամասն ներկայացնում է ժամանակակից տեսաբանների հայեցակերպերը: Հիմք ընդունելով դասական և ժամանակակից լեզվաբանների առաջ քաշած դրույթները՝ ատենախոսը համադրում է տարբեր գիտական մոտեցումներ, վերլուծում դրանց կիրառելիությունն ու արդիականությունը: Աշխատության հեղինակը ոչ միայն ներկայացնում է թեմայի շուրջ գոյություն ունեցող տեսությունները, այլև իրականացնում է համեմատական վերլուծություն՝ մատնանշելով դրանց ուժեղ և թույլ կողմերը:

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերում երկակիության և տոնայնության ուսումնասիրությանը: Հետաքրքրություն և ավելի մեծ հետազոտական արժեք է ներկայացնում ատենախոսության 3-րդ գլուխը, որում երեք առանձին ենթագլուխներում ներկայացված են Լեոնային Ղարաբաղին և Կոսովոյին առնչվող ՄԱԿ-ի բանաձևերի և ԵԱՀԿ փաստաթղթերի համեմատական վերլուծության արդյունքները՝ դրանցում կիրառված խոսքային ակտերի, ցուցայնության, կանխենթադրույթների և գործաբանական ցուցիչների շեշտադրմամբ: Կատարված է մանրամասն և

բազմակողմանի վերլուծություն: Ատենախոսը ճիշտ ընտրություն է կատարել՝ սկսելով ՄԱԿ-ի համապատասխան բանաձևերի համեմատությունից, քանի որ դրանք են դարձել հետագա գործողությունների և բանակցությունների համար հիմնարար փաստաթուղթ և ելման կետ: ՄԱԿ-ի բանաձևերի քննությունից ակնհայտ է դառնում, որ համաշխարհային հանրայթը ի սկզբանե երկու հակադիր դիրքորոշում է ընդունել այդ հակամարտությունների առումով, ինչն էլ պայմանավորել է դրանց հետագա ընթացքը, զարգացումները և հանգուցալուծումը: Նշենք, որ խոսույթի վերլուծության ժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել արտաքին գործոններն ու հանգամանքները: Տվյալ դեպքում այս երկու հակամարտությունները, ունենալով ինքնորոշման նույն օրակարգը, նաև տարբերվում են, մասնավորապես ՀՀ-ի՝ որպես երրորդ կողմի ներգրավմամբ: Տարբերվում են նաև Կոսովոյի դեպքում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչի և Լեռնային Ղարաբաղի դեպքում ԵԱՀԿ Մինսկի խմբի՝ որպես բանակցությունների միջնորդի իրավասությունները: Բանակցությունների միջնորդ կողմերը պարտավոր են պահպանել չեզոքություն, ինչն էլ ակնհայտ է Ա.Թամազյանի կողմից իրականացված վերլուծության արդյունքներից (տես էջ 76): Կարելի է եզրակացնել, որ ուսումնասիրվող փաստաթղթերի լեզվագործարանական առանձնահատկությունները բխում են ՄԱԿ-ի բանաձևերի և ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական իրավասությունների շրջանակից, և ոչ թե այդ առանձնահատկություններն են հակամարտության խաղաղ կարգավորման ձախողման պատճառ: Այդուհանդերձ նշենք, որ ընտրված փաստաթղթերի համեմատությունը հետաքրքիր պատկեր է վերհանում, օրինակ՝ խոսքային ակտերի տարբերությունների առումով (տես էջ 87):

Ատենախոսության 2-րդ և 3-րդ գլուխների վերաբերյալ հիմնական դիտարկումը առնչվում է օրինակների վերլուծության ներկայացմանը: Վերլուծության որոշ հատվածներում ատենախոսը չակերտներում տալիս է համատեքստից դուրս բառ կամ բառակապակցություն (տես էջեր 49, 57, 63, 108, 109), ինչը երբեմն բարդացնում է տեքստի ընկալումը, քանի որ հնարավոր չէ յուրաքանչյուր դեպքում կարգալ հավելվածում ընդգրկված ամբողջ փաստաթուղթը նշված բառակապակցությունը համատեքստում գտնելու համար: Բերենք մի քանի օրինակ՝ “In the statement from the OSCE Minsk Group issued in 2019, we can see that words like “commitment”, “preparations”, “welcomed” and “urge” reflect non-assertive actions that indicate tentative progress. (էջ 49): “In discussions around “quality of life further pragmatic ambiguity is evident. For instance, when the Co-Chairs addressed “security incidents and quality of life along the Line of Contact” (OSCE Minsk Group, 2013), the phrase “quality of life” could imply either a broad view of regional living conditions or a focused concern on the security impacts for civilians”. (էջ 63): “The lexical choices of the text “constructive approach”, “peace process”, “confidence-building measures” reflect diplomatic norms and values, highlighting goals of stability, compromise and progress. Terms like “responsibility” and “momentum” imply forward movement, while also subtly setting the expectation of

compromise, thus promoting a balanced narrative.” (էջ 108): Կարծում ենք
ատենախոսությունը կշահեր, եթե վերլուծության նպատակով ներկայացվեին
հավելվածում ներառված հետազոտության օբյեկտ փաստաթղթերից ընտրված
հատվածներ, որպեսզի համատեքստից հասկանալի լիներ վերլուծության
տրամաբանությունը:

Ցանկալի կլիներ յուրաքանչյուր փաստաթղթի օրինակների քննարկումից
առաջ հակիրճ տեղեկություն տրվեր կոնկրետ ժամանակահատվածի իրավիճակի
մասին, ինչը կենտրոնական է խոսույթի վերլուծության համար, այլապես այն
վերածվում է տեքստի վերլուծության: Ինչպես իրավամբ ատենախոսը մեջբերում է
Ն.Արուտյունովայի սահմանումը «Discourse is a text immersed in life» (էջ 12):

Ատորև ներկայացնում ենք նաև մի շարք այլ դիտարկումներ, որոնք միտված են
հետազոտության և դրա ներկայացման բարելավմանը:

1. Ներածության մեջ ատենախոսը նշում է, որ հետազոտության համար
կիրառվել են «նկարագրական, խոսույթի, կոնտենտ, համեմատական և
սենտիմենտ վերլուծության մեթոդները, ինչպես նաև հետազոտության
որակական և քանակական մեթոդներ» (էջ 7): Նշենք, որ խոսույթի,
կոնտենտ և սենտիմենտ վերլուծությունները որակական վերլուծության
գործիքակազմ են:
2. Առաջին ենթազխում հիմնականում ներկայացվում են դիվանագիտական և
քաղաքական խոսույթների տարբերություններն ու նմանությունները և
գործաբանական առանձնահատկություններից խոսվում է միայն
գործաբանական ցուցիչների մասին: Կարծում ենք տեղին կլիներ դրանք
ներառել երրորդ ենթազխում, որտեղ ներկայացված են գործաբանական
տեսությունները, օրինակ՝ խոսքային ակտերի տեսությունը և
լեզվագործաբանական առանձնահատկությունները, ինչպիսիք են
ցուցայնությունը և կանխենթադրույթը:
3. Կարծում ենք վիճահարույց է երկրորդ գլխի վերնագրի ձևակերպումը՝
Defeatist Discourse of the OSCE Minsk group Statements and Reports as a Cause
of the Defeat of Nagorno-Karabakh Conflict (հայերեն թարգմանությամբ՝
ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարությունների և զեկույցների պարտվողական
խոսույթը՝ որպես Լեռնային Ղարաբաղի հակամարտության պարտության
պատճառ): Ավելի համապատասխան ձևակերպում կլիներ
«հակամարտության խաղաղ կարգավորման ձախողում» տարբերակը:
4. Երկրորդ և երրորդ գլուխներում բավականին մեծ տեղ է գրավում տեսական
մոտեցումների ներկայացումը, օրինակ՝ էջեր 49-50, 64-66, 71-73: Բացի
այդ, վերլուծական հատվածներում ինքնահղումների կարիք չկա:
5. Ատենախոսը քննարկում է լոկուտիվ, իլոկուտիվ և պերլոկուտիվ ակտերը
հաճախ առանձին օրինակներով (տես աղյուսակ 7, էջ 85-86 և աղյուսակ 8,
էջ 86-87) մինչդեռ այս երեք ակտերն էլ հիմնականում առկա են միևնույն

ասույթի մեջ: Տվյալ հետազոտության շրջանակում նախընտրելի կլինեն քննարկել միայն իլոկուտիվ ուժը, քանի որ պերլոկուտիվ ուժի քննարկումը պահանջում է տվյալ զեկույցներից ու հայտարարություններից հետո հակամարտող կողմերի հայտարարությունների և գործողությունների քննարկում:

6. Հետազոտության արդյունքների ներկայացումը ավելի տեսանելի կլինեն, եթե 90-րդ էջի 12-րդ աղյուսակում տրված բայերը ներկայացվեին օգտագործման հաճախականության վիճակագրությամբ:
7. Ատենախոսությունն անշուշտ կշահեր, եթե ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարություններից և զեկույցներից դուրս բերված օրինակները գրվեն շեղատառ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ որոշ բառեր, արտահայտություններ կամ բառակապակցություններ՝ թավ տառերով, ինչը կօգնի ընթերցողին արագ կողմնորոշվել հիմնական շեշտադրումներում: Ընդհանուր առմամբ, թեև ատենախոսության տեքստում առկա են որոշ քերականական, բառային և ոճական անհարթություններ, դրանք չեն խաթարում տեքստի ընկալումը:

Կարծում ենք, որ վերոնշյալ դիտարկումները չեն ստվերում հետազոտության արժեքը և գիտականությունը:

Ատենախոսության եզրակացությունը հիմնավորված և ամբողջական է, ինչը վկայում է ատենախոսի բազմակողմանի հետազոտական աշխատանքի մասին: Ա.Թամազյանը ամփոփում է ուսումնասիրության հիմնական դրույթները և սահմանում կարևոր գիտական հետևությունները: Եզրակացության մեջ առկա են հստակ ձևակերպված դրույթներ, որոնք հիմնված են թե՛ տեսական վերլուծության, թե՛ գործնական ուսումնասիրությունների վրա: Ավելին, եզրակացությունն առանձնանում է իր կառուցվածքային ամբողջականությամբ ու փոխկապակցվածությամբ և ապահովում է կատարված հետազոտության մասին ճշգրիտ և համապարփակ պատկերացում:

Ատենախոսության սեղմագրում արտացոլված են ատենախոսության մեջ ներկայացված վերլուծության արդյունքները և եզրակացությունները, իսկ ատենախոսության հիմնական դրույթները համապատասխանաբար արտացոլված են հրապարակումներում:

ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անի Թամազյանի «Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերի խոսույթային և լեզվագործաբանական առանձնահատկությունները» վերնագրով բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության կարող է որակվել որպես բովանդակությամբ հարուստ և գիտականորեն արժեքավոր ուսումնասիրություն: Այն համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին, և Անի Արթուրի Թամազյանը արժանի է իր հայցած Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընդունվել է ԲՊՀ անգլերենի հաղորդակցության ամբիոնի 2025թ-ի փետրվարի 7-ի N 6 նիստում:

Նիստին ներկա էին՝ բ.գ.թ., դոցենտ Լ.Բադալյանը, բ.գ.թ., դոցենտ Ս.Գյուրջայանցը, բ.գ.թ., դոցենտ Կ.Աղաբեկյանը, բ.գ.թ., դոցենտ Ն.Հակոբյանը, բ.գ.թ., դոցենտ Ա.Ալավերդյանը, մ.գ.թ., դոցենտ Ա.Գասպարյանը, բ.գ.թ., դոցենտ Ս.Կարապետյանը, բ.գ.թ., դոցենտ Շ.Աբրահամյանը, բ.գ.թ., ավագ դասախոս Ա.Մակարյանը, բ.գ.թ., Ն.Հակոբյանը:

Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի
Անգլերենի հաղորդակցության ամբիոնի վարիչ՝

Լիլիթ Բադալյան

Հաստատում եմ բ.գ.թ., դոցենտ Լ.Բադալյանի ստորագրությունը:
ԲՊՀ-ի գիտքարտուղար՝



Հասմիկ Փիլավջյան